

մանային բերդերը, որոնք շինուած էին սահմաններուն մօտ, երկրին կարեւոր ճամբաներուն վրայ, եւ կը խափանէին թշնամիներու մուտքը մեր երկրէն ներս. հոն կը մնային միայն պահապան զօրքեր. պատերազմի մը պարագային էր որ հոն կը հաւաքուէին զուգերը եւ մարտ կը մըղէին թշնամիին դէմ:

Իսկ Միջնաբերդ կը կոչէին պարսպապատ քաղաքին մէջտեղ բարձրացող ամուր բերդը, ուր կ'ապաստանէին քաղաքացիները՝ երբ կը գրաւուէին քաղաքին արտաքին պարիսպները. հոս վերջին դիմադրութիւն մը եւս ցոյց կու տային մինչեւ որ դուրսէն իրենց օգնութիւն հասնէր: Հայաստանի շատ մը քաղաքներ ունէին իրենց միջնաբերդը. այսպէս Արտաշատ, Տիգրանակերտ, Անի, Խարբերդ, Բալուէն, որոնց աւերակները մինչեւ այսօր տակաւին կանգուն կը մնան իբրեւ կոթողներ հայ ինքնապաշտպանութեան:

Հայ բերդերը մեր պատմութեան մէջ

Հայաստանի բերդերը որոշ դեր մը խաղացեր են մեր պատմութեան մէջ զանազան տեսակէտներով: Փաղաքական տեսակէտով անոնք մեր ներքին սրտերը եղան, ուսկից անցան կենսունակութեան եւ մարտի արիւնը, եւ վառ պահեցին հայ ինքնապաշտպանութեան ոգին. անոնք մեր երկրին դռները եղան, որոնք փակ պահեցին թշնամիներու առջեւ ազատ մուտքը. անոնց առջեւ բարբարոս ոյժերը ներկար առնէին կանգ առին, եւ միայն արիւնով է որ կըրցան ճամբայ բանալ եւ մտնէին մեր երկրը. արաբական եւ սելճուկեան յարձակումներու միջոց մեր բերդերը իբրեւ թումբեր կանգնեցան այդ ահաւոր յարձակումներէն առջեւ եւ կասեցուցին թափը օտար բանակներուն:

Մեր պատմիչները միշտ գովեստով ու

պարծանքով է որ կը խօսին եւ կը գրեն մեր բերդերուն մասին. այսպէս «Ամուրք դովելիք եւ անկախ եւ անսասանելի ի հնարից մարդկան Աստուածաստեղծ պարսպօք» (Օրբ. էջ 14). եւ եթէ մեր պատմութեան ընթացքին հետեւինք, պիտի տեսնենք որ մեր բերդերն են որ շատ անգամ ազատած են մեր ժողովուրդը եւ բանակը վերջնական փճացումէ: Այսպէս վարդանանց պատերազմէն վերջ շատեր ապաւինեցան անառիկ ամրոցներու մէջ, ուր ոչ միայն իրենք զիրենք ապահով կը զգային, այլ եւ անկէ նոր ոյժով կը յարձակէին թշնամիին վրայ: Դ. դարուն, ինչպէս նաեւ աւելի ուշ՝ ԺԱ. եւ ԺԲ. դարերուն այնքան զօրացան մեր բերդերը, որ հոն կազմուեցան իշխանութիւններ եւ թագաւորութիւններ, որոնք իրենց շուրջը խմբելով հայ ժողովուրդը՝ փրկեցին հայրենիքը վերահաս կործանումէ: Այսպէս Բագ բերդի մէջ կազմուեցաւ Բագաց քաղաքութիւնը, եւ յաջորդաբար Մածնաբերդի քաղաքութիւնը Մածնաբերդի մէջ, Մահկանաբերդի իշխանութիւնը նոյն բերդին մէջ, Խոխանաբերդի մէջ հիմնուեցաւ զօրաւոր իշխանութիւն մը որ երկար դիմադրեց սելճուկներուն. հուսկ կար դիմադրեց սելճուկներուն. հուսկ կայան բերդին մէջ հիմնուեցաւ Զաքարիայի բերդին մէջ հիմնուեցաւ Զաքարիայի բերդին մէջ, Խոխանաբերդի մէջ հիմնուեցաւ Զաքարիայի բերդին մէջ:

Այսպէս եթէ Մեսրոպ իր գրով, Վարդան իր սուրով, մեր բերդերն ալ իրենց «աստուածաստեղծ պարիսպներով» փրկեցին հայ ժողովուրդը վերջնական բնաջնջումէ մը:

Անոնք եղան նաեւ գիտութեան կեդրոններ, ուր մշակուեցաւ եւ պահուեցաւ հայ գիրն ու գրականութիւնը. հոն պահպանուեցան ու գրուեցան շատ մը ձեռագիրներ. ինչպէս Նկան, Բագ, Սեւան բերդերը. ինչպէս Նկան, Բագ, Սեւան բերդերը արեւելեան Հայաստանի մէջ. իսկ Կիլիկիոյ մէջ՝ Հռոմկլայ, Վահկայ եւ Անար-գաբայ բերդերը:

Հայաստանի բերդերը իբրեւ արուեստ(13):

Հայաստանի բերդերը երկար դարերէ վերջ տակաւին կը մնան դեղարուեստի հրաշալիքներ. անոնցմէ հնագոյնները շինուած են աղիւսէ, ինչպէս է Արտաշատ. իսկ ուրիշներ աւելի տաշուած քարերէ, առանց չաղախի, իրենց ծանրութեամբ միայն զիրար կը բռնէին: Բերդերու

(13) Հայկական բերդերու ճարտարապետական կառուցումներն վրայ մասնագիտական ուսումնասիրութիւն մը հրատարակած է ճարտ. Ս. Ճէվան հրահան «Հայկական ռազմաճարտարապետութիւն» խորագրով: Տէս Բագմ. 1949, էջ 28-31, 85-90. 1950, էջ 64-75, 168-173:

(Շարունակելի)

ՊԵՒԼԱՏՀՈՐԻ ԱՐԱՔ ՊԱՏՄԱԳԻՐԸ

ԵՒ

Հ Ա Յ Ե Ր Ը

(Շար. Բագմ. թիւ 6-7 1953, էջ 130)

ԺԵ. — Մարաշ, Հատաքի եւ Կիլիկիոյ սահմանագիւղիս ուրիշ քաղաքները

Կը պատմուի թէ Ապու Ուպայտա իպն ալ-ճառահ մինչ Մանալը կը գտնուէր, ուղարկեց Խալիլ իպն ալ-Ուպայտա Մարաշի վրայ ու գրաւեց բերդը. անոր բնաջնջումը հեռացան, ու կործանեց քաղաքը: Սոֆիան իպն Աուֆ ալ-Ղամրուի երբ 30ին (650) արշաւեց Յոյներուն վրայ, մեկնեցաւ Մարաշի կողմէն ու շրջեցաւ Յոյներուն երկրին (Փոքր Ասիա) մէջ: Մուսա իպն Մարաշ քաղաքը ու գայն շինուորներով լեցուց: Երբ մեռաւ Նեկիտ

Իպն Մուսայի, Յոյներուն արշաւանքները բազմացան Մարաշի վրայ: Այն ատեն զինուորները ուրիշ տեղ գացին:

Իսկ Ապուրմէլիք հաշտուեցաւ Յոյներուն հետ իր հօր՝ Մուսան իպն ալ-Հաքամի մահէն ու խալիֆայութիւնը պահանջեց վերջ: Համաձայնեցաւ անոնց (Յոյներուն) հետ որ հարկ վճարէ:

74ին (693) Մուսամէտ իպն Մուսան արշաւեց Յոյներուն երկիրը ու խոցեց հաշտութեան դաշինքը: 75ին (694) ճումամա առաջինին ամառնային արշաւանքը կատարեց Մուսամէտ իպն Մուսան ու քրէնց Յոյները մինչեւ Մարաշի խորքերը կոչեց:

Րաշխո նամակ դրեց Մոհամմէտ իպն Իպրահիմի, զայն հաստատելով իր պաշտօնին վրայ: Ասոր յանձնեց Հատաթհ քաղաքին շինութիւնը: շինեց զայն ու յետոյ պաշտօնանկ եղաւ:

Պատմեցին թէ Մալըք իպն ալ-Խաթհա-մի, որ կոչուեցաւ ամառնային արշաւանքներու թաղաւոր եւ պաղեստինցի էր, 46-ին (666) արշաւեց Յոյներուն երկրին վրայ ու շատ կողոպուտներ ընելէ վերջ ետ դարձաւ: Եւ երբ Տարպէ-Հատաթհ կիրճէն տասնըփնէ հազար մղոն հեռու էր, տեղի մը մէջ որ կը կոչուէր Ար-Րահուա, հոն կեցաւ երեք օր. ծախեց աւարները ու բաժնեց իւրաքանչիւրին իր բաժինը: Այն ատեն այդ հողը կոչուեցաւ «Րահուադ Մալըք», որ է ըսել Մալըքի հող (էջ 188-191):

ԺԶ. — Զիպաքրա քաղաքը

Պատմեցին թէ Ապուր-Ուսհըտի դաշտը ճարակատեղի էր իսլամներուն ձիերուն: Եւ երբ շինուեցան ալ-Հատաթհ ու Զիպաթրա, զայն լքեց ու մշակութեան յատկացուեցաւ: Պատմեցին նաեւ թէ Զիպաթրա յունական հին ամրոց մըն էր, զրաւեց զայն Հապիպ իպն Մաւլամա ալ-Ֆիհրի ալ-Հատաթհ հին ամրոցին հետ: Շարունակեց մնալ Արաբներուն ձեռքը, մինչեւ որ Յոյները զայն աւերեցին ալ-Ուսլիտ իպն Նեդիտի ժամանակ (743-744), որուն օրերուն շինուեցաւ խախուտ կերպով: Յետոյ Մրուան իպն Մոհամմէտի երկպառակութիւններուն ժամանակ Յոյները վրան յարձակեցան ու կործանեցին զայն:

Ալ-Մանսուր (754-775) զայն շինեց. յետոյ Յոյները ելան կործանեցին: Ար-Րաշխո (786-809) նորէն շինեց զայն Մոհամմէտ իպն Իպրահիմի ձեռքով ու զայն լեցուց մթերքով: Յոյները ալ-Մամունի խալիֆայութեան ժամանակ նորէն հարուածեցին զայն ու աւերեցին: Յարձակեցան բնակիչներուն հօտերուն վրայ ու զա-

նոնք առին տարին: Այն ատեն ալ-Մամուն (813-833) հրամայեց զայն նորոգել ու ամրացնել: 210-ին (825) Յունաց կայսեր պատգամաւորները եկան հաշտութիւն խնդրելու, բայց ալ-Մամուն խալիֆան չընդունեցաւ: Սահմանադրութիւն քաղաքներուն հրամանատարները իրեն դրեցին ու չընկացան Յունաց երկրին մէջ շատ սպաննութիւններ կատարելով: Յնցեցին Յոյները ու փառահեղ յաղթանակ տարին, բայց Նադիտան իպն Ապուր-Ալա իպն Ահմատ իպն Նեդիտ իպն Ուսայտ աս-Սուլամի դարնուեցան:

Ալ-Մուգամադ Պիլլահ Ապու Իսհակ իպն ար-Րաշխոի խալիֆայութեան ժամանակ (833-842) Յոյները նորէն յարձակեցան Զիպաթրայի վրայ, սպաննեցին այրերն ու կիները ու զայն աւերեցին: Այդ բանը զինքը զայրացուց ու կատուեցուց. անձամբ արշաւեց մինչեւ Ամուրիա: Դեռ հոն չհասած աւերեց բերդեր ու բանակեցաւ առջեւը մինչեւ որ դրաւեց զայն: Սպաննեց ռազմիկները, զերեց կիներն ու տղաները, աւերեց զայն ու հրամայեց շինել Զիպաթրան, զայն ամրացնել ու մթերքով լեցունել: Յետոյ Յոյները ուղեցին զրաւել զայն, բայց չյաջողեցան (էջ 191-192):

ԺԷ. — Հըսըն Մանսուր բերդը

Ինծի պատմեց Ապու Ամր ալ-Պահլի եւ ուրիշներ թէ Հըսըն Մանսուր (Մանսուրի բերդ) կը վերագրուի Քայս ցեղէն Մանսուր իպն Ճաւադա իպն ալ-Հարթհ Մանսուրի օրերուն (745-750) թշնամին ետ մղելու համար հետն ունենալով ստուար զօնը մը Սիւրիոյ եւ Միջագետքի զինուորներէն: Այս Մանսուրը եղեսիոյ կառավարիչն էր երբ սկիզբը չուղեցին հպարտակիլ (Արասեան) կայսրութեան: Ալ Մանսուր՝ Միջագետքի ու Հայաստանի վրայ Ապուլ Ապպասի գործակալը՝ զիրենք

պաշարեց. եւ երբ առաւ բերդը, փախաւ Մանսուր, բայց յետոյ ապահովութիւն առաւ ու հեռացաւ: Եւ երբ Ապտալլա իպն Ալի ապստամբեցաւ Ապու Ճաֆար Մանսուրէն, զինքը ռաշխոյութեան պետ կարգեց Ապտալլա. ու երբ Ապտալլա փախաւ Պասրա, ինքն ալ պահուեցաւ: Յետոյ ոմանք մատնեցին զինքը 141-ին (758), բերին ալ-Մանսուրի որ Երուսաղէմէն դառնալէ վերջ սպաննեց զինքը Ռաքբայի մէջ: Ուրիշներ ալ կ'ըսեն թէ անոր ներում չնորհուեցաւ Իպն Ալիի փախուստէն վերջ

(Շարունակելի)

ՏՕԲԹ. ՆԱՆՍԻՆԻ ՀԱՅՈՑ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԹՈՒՂԹԵՐԸ

Մանսուր հետաքրքրութեամբ ուշադրութիւնս դրաւեց հետեւեալ տեղեկութիւնը, որ երեւցաւ փարիզահայ օրաթերթի մը մէջ, քանի մը ամիսներ առաջ. զայն կու տամ ամբողջութեամբ. —

« Յայտնի լրագրող Տոքթ. Լիս Լիմուպէֆ կը տեղեկացնէ, թէ հայասէր Տոքթ. Ֆրետտոֆ Նանսէնի ձեռագիրներուն մէջ կը գտնուին մեծ քիւով քուղքեր Հայոց մասին:

« Ըստ Նանսէնի կտակին, իր ձեռագիրները պէտք է բացուին եւ հրատարակուին իր մահէն 25 տարի ետք: Մեծ հայասէրը մեռաւ 1930-ին. արդ, քուղքերը պէտք է հրատարակուին 1955-ին:

« Նանսէնի մահէն ետք, իր Տիկինը պաշտօն յանձնեց Տոքթ. Լիմուպէֆի, որ պէսզի դասաւորէ Նանսէնի քուղքերը:

« Նանսէն գրած է, ինչպէս ծանօթ է, կարեւոր գիրք մը «Հայաստան եւ Մեր-ձաւոր Արեւելք», հրատարակուած բազմաթիւ լեզուներով: Ան շահեցաւ նախ-

ու յետոյ հեռացաւ: Վերջը գտնուեցան անոր նամակները որ ուղղուած էին Յոյներուն, որոնց մէջ գրած էր թէ Իսլամ կրօնքը խաբարայ կրօնք է: Ու երբ ալ-Մանսուր Ռաքբա եկաւ Երուսաղէմէն, 141-ին (758) զրկեց մէկն ու անոր վրիզը կտրեց Ռաքբայի մէջ եւ գնաց Հալմիա՝ Քուֆայի մէջ:

Ար-Րաշխո շինեց մանսուր բերդը զոր մթերքով լեցուցած էր Մահալի խալիֆայութեան ժամանակ (էջ 192):

Թրգմ. արաբերէնէ

Հ. ԱԲՐԱՀԱՄ ԱԴԱՄԵԱՆ

լեան մրցանակը 1922-ին: 1921-ին, Ազգերու Դաշնակցութեան միջոցաւ ստեղծեց Նանսէնեան անցագիրը, հայ եւ ռուս տարագիրներու համար, որոնք մինչեւ հիմա այդ քուղքերով կը մամբողջեն:

« Տոքթ. Լիմուպէֆ կը տեղեկացնէ, թէ Նանսէնի քուղքերուն մէջ կը գտնուին նաեւ կարեւոր տեղեկագիրներ, որոնք բացառիկ կարեւորութիւն ունին Հայոց համար: Տոքթ. Լիմուպէֆ մօտէն հետաքրքրուած է հայերով: 1951-ին, 12 նոյեմբերին լրագրողներու հետ այցելած էր վրաստան»:

* * *

Բոլորովին աւելորդ կը նկատեմ Տօքթ. Նանսէնը ներկայացնել, հոս, հայ հասարակութեան:

Անիկա ոչ միայն անկեղծօրէն հայասէր մըն էր, այլ եւ մեծապէս օգտակար եղաւ հայութեան, ու եւ է օտարէ մը աւելի: Իր գործունէութիւնը՝ այս մասին, մեղի հա-